ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/03

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2018թ. թիվ 03/26-3/249-18 գրությամբ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 09.01.2018թ. գրության հիման վրա, 11.01.2018թ. թիվ 03/26-3/249-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 17.01.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/573-18 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 29.01.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի կողմից վերջինիս կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով մրցույթ, որի համար հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 08.12.2017թ. ժամը 18:00-ն:

Վերոհիշյալ հրավերի 1.1.-րդ կետի համաձայն՝ մրցույթի գնման առարկա է հանդիսանում դեղորայքի ձեռքբերումը:

Հրավերի Հավելված 7-ով նախատեսված «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ» 1.1. կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Հրավերի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման հասցեն է՝ ք. Գյումրի, Հաղթանակի 25:

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն մասնակցել է. «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի կողմից հայտարարված վերոհիշյալ մրցույթին:

«ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 12.12.2017թ. ժամը 10:00-ի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրության թիվ 4 կետի համաձայն՝ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված սահմանված պահանջներին համապատասխան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.12.2017թ. թիվ 6 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ որոշել է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին, «Ալֆա Ֆարմ» ՍՊԸ-ին, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին, «Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ին և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին համապատասխան

չափաբաժինների մասով ճանաչել առաջին և երկրորդ տեղ զբաղեցնող և ընկերություններին ծանուցելով այդ մասին՝ պահանջել հրավերով նախատեսված փաստաթղթերը /ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը/:

Սակայն Ընթացակարգի 09.01.2018թ. թիվ 7 արձանագրության 1-ին կետի համաձայն որոշվել է, որ թիվ 3-րդ չափաբաժնի մասով «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 6.1 նշված տեղեկատվությունը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար այդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու նպատակով փաստաթղթեր ներկայացնելու առաջարկ ներկայացնել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներին»:

Ընկերությունը նշել, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին 19.12.2017թ. ստացվել է «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Հ. Հարությունյանի գրությունը հետևյալի մասին. «Սույնով ծանուցում եմ, որ գնանշման հարցման մեթոդով գնում կատարելու «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 2017թ. դեկտեմբերի 19 թիվ 4 որոշմամբ թիվ 3 չափաբաժնի մասով «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն ճանաչվել է գնանշման հարցման մեթոդով գնում կատարելու «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ մասի ....: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացնելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին»:

Այնուհետև 27.12.2017թ. «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին կրկին ստացվել է «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Հ.Հարությունյանի գրությունը, որտեղ նշվել է՝ «Սույնով ծանուցում եմ, որ գնանշման հարցման մեթոդով «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով էլեկտրոնային գնման ընթացքում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթերում տեղ է գտել որոշակի անհամապատասխանություն, մասնավորապես՝ Հավելված 6.1-ում ներկայացված նշված է հետևյալը, մեջբերում «Դեղատունը գտնվում է 25 կմ հեռավորության վրա», ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին, որը ներկայացված է եղել «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման

կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 27.01.2005թ. թիվ 74-Ն հրամանի 4.1, 4.7, 4.8 կետերին համապատասխան: Խնդրում ենք սույն ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում ուղղել սխալը և կրկին ներկայացնել «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ»:

Ընկրության կողմից որպես բացահայտված թերությունների հակիրճ բովանդակություն նշվել է հետևյալը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 46-րդ կետի համաձայն՝ կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը նշել է, որ թվարկված փաստերը վկայում են, որ «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի կողմից շտկում կատարելու ծանուցման հարցում թույլ են տրվել հետևյալ խախտումները.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.12.2017թ. թիվ 6 արձանագրությամբ (2.1-րդ կետ) «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ից պահանջել է հրավերով նախատեսված փաստաթղթերը /ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը/: Եվ այնուհետև միանգամից 09.01.2018թ. թիվ 7 արձանագրությամբ որոշվել է, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 6.1 (առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր) նշված տեղեկատվությունը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար այդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու նպատակով փաստաթղթեր ներկայացնելու առաջարկ ներկայացնել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներին:

Ընկերությունը նշել է, որ վերոհիշյալից բխում է, որ բացակայում է Կարգի 46-րդ կետով պահանջվող հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը, որի ժամանակ հանձնաժողովը պետք է գնահատեր նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն պետք է նկարագրվեր հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բացի այդ, «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին 27.12.2017թ. ուղարկված ծանուցումը շտկում կատարելու վերաբերյալ պահանջով ներկայացվել է «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Հ.Հարությունյանի կողմից, ով որևէ կապ չունի «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով գնահատող հանձնաժողովի հետ, իսկ Կարգի 47-րդ կետի համաձայն՝ նման ծանուցում ներկայացնելու իրավունքը պատկանում է բացառապես հանձնաժողովի քարտուղարին:

Ընկերությունը հայտնել է նաև, որ տնօրենի ծանուցման մեջ ընդհանրապես նշված չէ, թե կոնկրետ ինչ շտկում պետք է կատարվեր, ինչը հանդիսանում է Կարգի 46-րդ կետի խախտում, որի պայմաններում ընկերության համար կանխատեսելի չէր, թե ընդհանրապես ինչպես պետք է կատարվի շտկումը:

Բացակայում է նաև նիստի արձանագրություն, որի մեջ մանրամասն նկարագրվեր տեխնիկական բնութագրերում հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ընկերությունը գտնում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության նշված խախտումների հետևանքով «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված խախտում:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի հրավերի որոշ հատվածներ հակասում են միմյանց, ինչպես նաև հրավերի առարկային: Մասնավորապես, որպես մրցույթի առարկա նշվել է դեղորայքի ձեռքբերումը, սակայն պատվիրատուի կողմից վկայակոչված ՀՀ առողջապահության նախարարի 27.01.2005թ. թիվ 74-Ն հրամանը վերաբերում է միանգամայն այլ տեսակի մրցույթներին, մասնավորապես քաղաքացիներին անվճար դեղորայքի ապահովման պարտադիր ցանկով դեղատնային ծառայությունների ձեռքբերմանը: Նման դեպքում (դեղատնային ծառայությունների ձեռք բերման մրցույթի) հրավերը կարող է պարունակել դեղատան գտնվելու վերաբերյալ որոշակի պահանջ (օրինակ, 2 կմ): Մինչդեռ նշված ընթացակարգի տեխնիկական բնութագրով որպես ապրանքի մատակարարման հասցե նշվել է՝ ք.Գյումրի, Հաղթանակի 25-ը, և նման պայմաններում անհասկանելի է նույն տեխնիկական բնութագրով որպես հղում նշված հետևյալ պահանջը. «Վաճառողը դեղորայքը բաց է թողնելու գնորդի կողմից դուրս գրված դեղատոմսերով, պոլիկլինիկայի սպասարկման տարածքում գտնվող դեղատնից կամ դեղատնային կրպակից: Ապրանքը մատակարարվում է գնորդի կողմից հաստատված դեղատոմսերը վաճառողի կողմից նշված դեղատուն ներկայացնելու օրը կամ երկօրյա ժամկետում: 30% և 50% զեղչով ինչպես նաև հոգեմեդ դեղորայքի տրամադրումը հիվանդներին ապահովելու համար դեղատունը պետք է գտնվի՝ ք.Գյումրի, Հաղթանակի 25 հասցեից 2 կմ-ից ոչ հեռու: Ապրանքը տրվում է Գնորդի կողմից հաստատված դեղատոմսերի հիման վրա /Ստացողին/»:

Ընկերությունը նշել է, որ նույն տեխնիկական բնութագրով սահմանվում է դեղորայքի մատակարարման հստակ հասցե՝ ք.Գյումրի, Հաղթանակի 25, և այնուհետև պարզվում է, որ դեղորայքը պետք է տրամադրվի հիվանդներին դեղատնից, որը պետք է գտնվի ք.Գյումրի, Հաղթանակի 25 հասցեից 2 կմ-ից ոչ հեռու:

Ընկերությունը գտնում է, որ պատվիրատուի կողմից թյուրիմացաբար մեկ ընթացակարգի մեջ միավորվել են միանգամայն երկու տարբեր տեսակի մրցույթներ.

դեղորայքի ձեռքբերում և քաղաքացիներին անվճար դեղորայքի ապահովման պարտադիր ցանկով դեղատնային ծառայությունների ձեռք բերում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոն խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուն ընկերությանն ուղղված գրությամբ հայտնել է, որ Հավելված 6.1 նշված «դեղատունը գտնվում է 25 կմ հեռավորության վրա», չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջի, որը ներկայացված է եղել «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 27.01.2005թ. թիվ 74-Ն հրամանի 4.1, 4.7, 4.8 կետերի համապատասխան, ինչով փորձել է հիմնավորել 2 կմ հեռավորության իր ներկայացրած պահանջը, սակայն ՀՀ առողջապահության նախարարի 27.01.2005թ. թիվ 74-Ն հրամանի վկայակոչված 4.1, 4.7, 4.8 կետերում բացակայում է որևէ պահանջ 2 կմ հեռավորության վերաբերյալ, ուստի ք.Գյումրի, Հաղթանակի 25 հասցեից 2 կմ-ից ոչ հեռու պահանջը հանդիսանում է խտրական և չհիմնավորված պահանջ, որը հակասում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-ր մասի պահանջներին:

Ընկերությունը նշել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին»: Մինչդեռ «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի արձանագրությունից երևում է, որ վերջինիս կողմից կոպտորեն խախտվել է օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ հայտերի բացման

նիստը հրավիրվել է 12.12.2017թ. ժամը 10:00, մինչդեռ հայտերի վերջնաժամկետը եղել է 08.12.2017թ.:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.01.2018թ. թիվ 8 արձանագրությամբ որոշել է, որ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 7-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար այդ չափաբաժիններով պայմանագիր կնքելու նպատակով փաստաթղթեր ներկայացնելու առաջարկ է ներկայացվել համապատասխանաբար 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին, որը սակայն 3-րդ չափաբաժնի ամբողջական նկարագիրը ներկայացնելիս հայտարարել էր, որ չունի պոլիկլինիկայի սպասարկման տարածքում գործող կրպակ, հետևաբար գնահատող հանձնաժողովը որոշել էր թիվ 7-րդ չափաբաժնի մասով փաստաթղթեր տրամադրելու առաջարկ ներկայացնել 3-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը նշել է, որ անհասկանալի է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած այն որոշումը, որ եթե «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի ամբողջական նկարագիրը ներկայացնելիս հայտարարել էր, որ չունի պոլիկլինիկայի սպասարկման տարածքում գործող կրպակ, հետևաբար թիվ 7-րդ չափաբաժնի մասով փաստաթղթեր տրամադրելու առաջարկ պետք է ներկայացնել 3-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովը պարտավոր էր «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ից պահանջելու 7-րդ չափաբաժնի մասով տրամադրվելիք փաստաթղթերը և նոր միայն դրանք գնահատելուց հետո որոշում կայացներ 3-րդ տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկ անելու մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է Խորհրդին հաշվի առնել նշված փաստարկները և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-րդ մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված խախտումը և ընկերությանը չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.01.2018թ. ժամը 11:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Ընկերությունը 18.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ խնդրել է 2-3 աշխատանքային օրով հետաձգել 19.01.2018թ. ժամը 11:30-ին կայանալիք նիստը՝ որպեսզի Ընկերության շահերը ներկայացնող իրավաբանական գրասենյակը ծանոթանա նյութերին և կարողանա իրականացնել Ընկերության շահերի պաշտպանությունը Խորհրդում:

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.01.2018թ. ժամը 12:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 09.01.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն թիվ 3, 5, 7, 23, 45 և 47-րդ չափաբաժիններով ներկայացրել է հայտ, որոնցից թիվ 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն Հավելված 6.1 ներկայացնելիս Ընկերությունը նշել է, որ դեղատնային կրպակը գտնվում է «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ի սպասարկման տարածքից 25 կմ հեռավորության վրա, ինչը չի համապատասխանում հրավերով նախատեսված պոլիկլինիկական սպասարկման տարածքի շառավղին (սպասարկման տարածքում գտնվելու պահանջը ներկայացված է եղել «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 27.01.2005թ. N 74-Ն հրամանի 4.1, 4.7, 4.8 կետերին համապատասխան):

Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերությանը, N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի համաձայն, ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում չի արձագանքել, հետևաբար հանձնաժողովի որոշմամբ հայտը կմերժվի և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն նշել է, որ թիվ 7-րդ չափաբաժնի մասով «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն վերջինիս կողմից հաստատված Հավելված 6.1-ում ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերում նշված պայմաններին, հետևաբար այդ չափաբաժնով ևս ընտրված մասնակից է ճանաչվել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն, քանի որ վերջինս տվյալ չափաբաժնով համարվում է 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից, սակայն հաշվի առնելով թիվ 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված Հավելված 6.1-ում առկա տեղեկատվությունն այն մասին, որ դեղատունը չի գտնվում պոլիկլինիկայի սպասարկման տարածքում, մասնակցի այլևս չի ներկայացվի տվյալ չափաբաժնի մասով Հավելված 6 և Հավելված 6.1-ի ներկայացման պահանջ:

Պատվիրատուն 01.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ ուսումնասիրելով «Հերմինե ֆարմեց» ՍՊ ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը, որն ուղարկվել էր ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, ինչպես նաև հաշվի առնելով բողոքարկման նիստերի ընթացքում քննարկված հարցերը, հայտնում է հետևյալը.

««Հերմինե ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիտողությունները չեն համապատասխանում իրականությանը, մասնավորապես՝

Ընկերությանն ուղարկվել են ծանուցումներ, ընդ որում բոլոր ծանուցումները ուղարկված են եղել armeps.am համակարգից՝ գնումների համակարգողի էջով: Իսկ այն փաստը, որ փաստաթղթերը վավերացված են եղել կազմակերպության տնօրենի կողմից, վկայում է միայն փաստաթղթի լրջության և օրինականության մասին:

Պատվիրատուն նշել է, որ այս պարագայում օրենքը չի արգելում փաստաթղթերի վավերացումը տնօրենի կողմից, մեջբերելով Կարգի 47-րդ կետը, այն է՝ «Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը»:

Պատվիրատուն հայտնել է, որ վերոգրյալից պարզ է դառնում, որ օրենքի որևէ կետ շրջանցված չի եղել:

Ինչ վերաբերում է նիստերի հրապարակման ժամկետներին, Պատվիրատուն նշել է, որ հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 08.12.2017թ., ժամը 18:00 (որը համընկել է հայտերի ներկայացման վերջնաժամկետի հետ), ինչի մասին հստակ նշված է բացման նիստի արձանագրության մեջ, որը հրապարակված է տեղեկատուում: Արձանագրությունը հրապարակվել է 12.12.2017թ., քանի որ բացման նիստը հետաձգվել է մասնակիցների կողմից ներկայացված հայտերում տեղ գտած թերությունների շտկման նպատակով, և կարգին համապատասխան վերջիններիս տրվել է ժամանակ՝ տեղ գտած թերությունները շտկելու, մեջբերում՝ «3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: /«Գնումների մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետ»/», և մեկ այլ մեջբերում ևս «8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: /«Գնումների մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ կետ»/:

Պատվիրատուն հայտնել է, որ վերոգրյալից, հստակ երևում է, որ օրենքը որևէ կերպ չի սահմանում բացման նիստի ժամկետ, քանի որ բացման նիստի ընթացքում է, որ թերություններով հայտեր ներկայացրած մասնակիցներին տրվում է ժամկետ՝ դրանք շտկելու, մեջբերում՝ «41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: /526-Ն որոշմամբ հաստատված կարգ, կետ 41/ »: Պատվիրատուն նշել է, որ այստեղ ևս, չկա որևէ հղում այն մասին, որ կասեցված նիստերը ենթակա են հրապարակման:

Այնուհետև, բացման նիստը ավարտվելուց հետո, ինչպես ևս նշվում է օրենքում, նիստն արձանագրվել և հրապարակվել է տեղեկագրում՝ սահմանված կարգով:

Ի հակադրություն «Հերմինե ֆարմեց» ՍՊ ընկերության կողմից ներկայացված դիտարկումների, Պատվիրատուն նշել է, որ գնահատման նիստի արձանագրության մեջ հստակ նշված է, որ ընկերությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, և վերջինիս տրվել էր հնարավորություն այն շտկելու, սակայն սահմված ժամկետներում որևէ արձագանք ընկերությունից չի ստացվել, և հետևաբար կիրառվել են 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետում նշված դրույթները, մեջբերում՝ «48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին»:

Պատվիրատուն նշել է, որ ինչ վերաբերում է հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին փաստաթղթեր ներկայացնելու պահանջի ներկայացման մասին, ապա թիվ 7-րդ չափաբաժնի մասով, ներկայացնելու պահանջ տրամադրվել է 3-րդ տեղ զբաղեցրած մասնակցին, քանի որ արդեն իսկ 3-րդ չափաբաժնի մասով «Հերմինե ֆարմեց» ՍՊ ընկերությունը, սահմված ժամկետում տեղ գտած թերությունը չշտկեց, և դրա հետևանքով վերջինիս տվյալները սահմանված կարգով ներկայացվեցին ՀՀ ֆինանսների նախարարություն (կիրառվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6)-րդ ենթակետով սահմանված դրույթները)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Պատվիրատուն հայտնել է, որ մասնակցին, ով խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և ներկայացված է եղել ՀՀ ֆինանսների նախարարություն, թիվ 7-րդ չափաբաժնի մասով որպես 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից կրկին ներկայացնել փաստաթղթեր ներկայացնելու պահանջ՝ կլիներ օրենքին հակասող:

Պատվիրատուն հայտնել է, որ ինչ վերաբերում է Ընկերության կոմից նշված այն մեջբերմանը, որ, որպես ընտրված մասնակից Հավելված 6.1-ում տեղ գտած անհամապատասխանությունը շտկելու նպատակով ուղարկված ծանուցման մեջ անհասկանալի է, թե կոնկրետ ինչն է պետք ուղղել, ապա սույն մասով ծանուցման մեջ հստակ կերպով հղում է կատարված ՀՀ առողջապահության նախարարի 27.01.2005թ. N 74-Ն հրամանին, ինչպես նաև նշված է մասնակցի կողմից ներկայացված տեղեկատվություն այն մասին, որ դեղատունը գտնվում է պոլիկլինիկայի սպասարկման տարածքից 25 կմ հեռավորության վրա:

Պատվիրատուն նշել է, որ հրավերում հստակ սահմանված պահանջ էր ներկայացվել սպասարկման տարածքի վերաբերյալ, քանի որ պոլիկլինիկան չի կարող գործել այլ կերպ, քան 74-Ն հրամանով սահմանված կարգն է: Այդպիսով, պոլիկլինիկան ապահովում է իր կողմից ձեռք բերված դեղորայքի բաշխումը կցագրված բնակիչներին: Պատվիրատուն հայտնել է, որ պարզ և հստակ է, որ հրավերում նշված պահանջը որևէ կերպ չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով սահմանված դրույթներին:

Պատվիրատուն հայտնել է, որ վերոգրյալ պահանջի մասով երբևէ որևէ բողոք ներկայացված չի եղել, իսկ եթե «Հերմինե ֆարմեց» ՍՊԸ-ին որևէ բան պարզ չէր, նա սահամնված կարգով հրավերի պարզաբանման ստացման հնարավորություն ուներ: Ավելին, ներկայացված 6 մասնակիցներից 5 հաղթողներից 4-ի ներկայացված փաստաթղթերն ու տեղեկատվությունը հանդիսանում են հրավերի պահանջներին համապատասխանող:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից նշված այն մեջբերմանը, որ պոլիկլինիկայի կողմից հայտարարված մրցույթի հրավերում միավորվել են 2 ընթացակարգ, ապա Պատվիրատուն նշել է, որ դեղորայքի ձեռքբերումը բնավ կապ չունի դեղորայքի հատկացման կարգի հետ: Ծանուցման մեջ նշված 74-Ն հրամանը հստակ նկարագրում է արդեն իսկ ձեռք բերված դեղորայքի տրամադրումը քաղաքացիներին, և որևէ կապ չունի գնման ընթացակարգի հետ:

Պատվիրատուն հայտնել է, որ պոլիկլինիկան ունի նաև 50% և 30% անվճար դեղորայք ստացող բնակիչներ, որոնց կողմից ստացվող դեղորայքի քանակի կանխատեսումը բժշկական առումով ուղղակի անհնար է, և մյուս կողմից պոլիկլինիկան որևէ իրավունք չունի

իր դեղատնից բաց թողնելու և տարբերություն հանդիսացող գումարը մուտք անելու իր դրամարկղ: Հետևաբար, 74-Ն հրամանով սահմանված դրույթները իրավապարտադիր և անխուսափելի են պոլիկլինիկական գործունեության համար, և անհնար է առանց դրանք պահպանելու որևէ ընթացակարգ կազմակերպել, հետևաբար «Հերմինե ֆարմեց» ՍՊ ընկերության կողմից ներկայացված մեջբերումներն անհիմն են և անիրական:

Պատվիրատուն նշել է, որ այն փաստը, որ հրավերում նշված է մատակարարման հասցեն ք.Գյումրի, Հաղթանակի 25, հուշում է միայն, որ հրավերի Հավելված 1-ում «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի ներքևում /49-րդ էջի վերջում/ նշված Ծանոթագրության է) կետում նշված սպասարկման տարածք ասվածը Գյումրի քաղաքի կոնկրետ ինչ հատված է ընդգրկում և որտեղ պետք է տեղակայված լինի կրպակը, քանի որ դեղերը, ինչպես և նույն կետում նշված է, բաց են թողնվելու պոլիկլինիկայի սպասարկման տարածքում առկա դեղատնային կրպակից:

Պատվիրատուն նշել է, որ հրավերի հրապարակված լինելու ժամանակ, սահմանված կարգով պարզաբանում պահանջելու սահմանված ժամկետ կար, որպեսզի մասնակիցը, որևէ անպարզություն չունենա՝ կապված հրավերի պահանջներ հետ:

Պատվիրատուն նշել է նաև, որ «Հերմիե ֆարմեց» ՍՊ ընկերությանը որևէ դրույթ կամ կարգ չէր խանգարում վերջինիս՝ պոլիկլինիկայի սպասարկման տարածքում գործող որևէ կրպակի հետ կնքել դեղատնային ծառայության մատուցման պայմանագիր, որը կօգներ ընկերությանը մասնակցել գնման գործընթացի հետագա ընթացքին, ինչի հետևանքով էլ կխուսափեր գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու ռիսկից: Նշվածը փաստում է այն մասին, որ «Հերմինե ֆարմեց» ՍՊ ընկերության համար «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ կողմից կազմակերպված «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով գնանշման հարցման մեթոդով գնման ընթացակարգի սահմաններում խտրական կամ մասնակցի՝ ընթացակարգին մասնակցությունը սահմանափակող որևէ պահանջ կամ դրույթ սահմված չի եղել:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ «Հերմինե ֆարմեց» ՍՊ ընկերության մեջբերած որևէ հանգամանք հիմնավոր և տեղին չէ, և խնդրել է Խորհրդին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված տվյալները համարել տեղին:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.01.2018թ. ժամը 11:30-ի և 30.01.2018թ. ժամը 12:30-ի նիստերի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է Խորհրդին վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/03 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2018/03 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի կողմից «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով Ընթացակարգի թիվ 3, 5, 7, 23, 45 և 47-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագրում (այսուհետ՝ Տեխնիկական բնութագիր) սահմանվել է, որ հոգեմեդ դեղորայքի տրամադրումը հիվանդներին ապահովելու համար դեղատունը պետք է գտնվի՝ ք.Գյումրի, Հաղթանակի 25 հասցեից 2 կմ-ից ոչ հեռու:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 2.1 կետով կայացված որոշմամբ՝ «Հերմինե Ֆարմեց ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (ապրանքի ամբողջական նկարագիր, որը ներառում է առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը):

4. Ընկերության կողմից 6.1 հավելվածը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը թիվ 3-րդ չափաբաժնի մասով, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը
3	Ամլոդիպին 5մգ*	Ամլոֆիլ 5	Ֆուրտս (Հնդկաստան) Լաբորատորիս Պվտ, ՍՊԸ	Հնդկաստան	Դեղահատ 5մգ

**** Դեղափունը գտնվում է 25 կմ հեռավորության վրա:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.01.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 7 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 6.1-ում նշված տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

6. Հանձնաժողովի քարտուղարը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ Ընկերության կողմից ներկայացված 6.1 հավելվածում նշված է, որ դեղատունը գտնվում է 25 կմ հեռավորության վրա, ինչը չի համապատասպանում հրավերով սահմանված պահանջին, որը ներկայացված է եղել «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 27.01.2005թ. N 74-Ն հրամանի 4.1, 4.7 և 4.8 կետերին համապատասխան:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.01.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 7/1 արձանագրությամբ արձանագրել է, որ թիվ 3-րդ չափաբաժնի մասով «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 6.1-ում նշված տեղեկատվությունը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին և մասնակցին առաջարկվել է 1

աշխատանքային օրվա ընթաքում շտկել տեղ գտած թերությունը, սակայն մասնակիցը սահմանված ժամկետում չի արձագանքել և չի շտկել տեղ գտած թերությունը, հետևաբար տվյալ չափաբաժնով պայմանագիր կնքելու նպատակով փաստաթղթեր ներկայացնելու առաջարկ է ներկայացվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 11.01.2018թ. թիվ 03/26-3/249-18 գրությունը, << Շիրակի մարզի Գյումրու «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 09.01.2018թ. և 01.02.2018թ. գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» << օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

2) ***հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին***, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները***: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

<< կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)***:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում **հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում <u>հանձնաժողովի քարտուղարը</u> նույն օրն <u>էլեկտրոնային եղանակով ծանուցում է</u> առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:**

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Այսպիսով, «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի կողմից «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագրում սահմանվել է, որ հոգեմեդ դեղորայքի տրամադրումը հիվանդներին ապահովելու համար ***դեղափունը պետք է գտնվի՝*** ք.Գյումրի, Հաղթանակի 25 հասցեից ***2 կմ-ից ոչ հեռու:***

Ընթացակարգին մասնակցելու նպատակով թիվ 3, 5, 7, 23, 45 և 47-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 2.1 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ «Հերմինե Ֆարմեց ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (ապրանքի ամբողջական նկարագիր, որը ներառում է առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը):

Ընկերության կողմից 6.1 հավելվածը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը թիվ 3-րդ չափաբաժնի մասով, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը
3	Ամլոդիպին 5մգ*	Ամլոֆիլ 5	Ֆուրտս (Հնդկաստան) Լաբորատորիս Պվտ, ՍՊԸ	Հնդկաստան	Դեղահատ 5մգ

* ***Դեղափունը գտնվում է 25 կմ հեռավորության վրա:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.01.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 7 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 6.1-ում նշված տեղեկատվությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Հանձնաժողովի քարտուղարը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ Ընկերության կողմից ներկայացված 6.1 հավելվածում նշված է, որ դեղատունը գտնվում է 25 կմ հեռավորության վրա, ինչը չի համապատասպանում հրավերով սահմանված պահանջին, որը ներկայացված է եղել «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 27.01.2005թ. N 74-Ն հրամանի 4.1, 4.7 և 4.8 կետերին համապատասխան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.01.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 7/1 արձանագրությամբ արձանագրել է, որ թիվ 3-րդ չափաբաժնի մասով «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 6.1-ում նշված տեղեկատվությունը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին և մասնակցին առաջարկվել է 1 աշխատանքային օրվա ընթաքում շտկել տեղ գտած թերությունը, սակայն մասնակիցը

սահմանված ժամկետում չի արձագանքել և չի շտկել տեղ գտած թերությունը, հետևաբար տվյալ չափաբաժնով պայմանագիր կնքելու նպատակով փաստաթղթեր ներկայացնելու առաջարկ է ներկայացվել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից*** փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ***ներկայացված՝*** ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ ***հրավերով նախատեսված փաստաթղթերի***, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի ***գնահատման արդյունքում*** **հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում <u>հանձնաժողովի քարտուղարը</u> նույն օրն <u>էլեկտրոնային եղանակով ծանուցում է</u> առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:**

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***<u>չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է</u>***, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվում, ապա հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարգի 47-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցված լինելով վերը նշված անհամապատասխանության մասին չի շտկել դրանք, ուստի Խորհուրդը գտնում է, որ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժելով «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից 29.01.2018թ. գրությամբ Խորհրդին ներկայացված այն պնդմանը, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին 27.12.2017թ. ուղարկված ծանուցումը շտկում կատարելու վերաբերյալ պահանջով ներկայացվել է «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի գործադիր տնօրեն Հ. Հարությունյանի կողմից, ով որևէ կապ չունի «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով գնահատող հանձնաժողովի հետ, իսկ Կարգի 47-րդ կետի համաձայն՝ նման ծանուցում ներկայացնելու իրավունքը պատկանում է բացառապես հանձնաժողովի քարտուղարին, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից*** փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ***ներկայացված՝*** ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ ***հրավերով նախատեսված փաստաթղթերի***, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի ***գնահատման արդյունքում*** **հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում <u>հանձնաժողովի քարտուղարը</u> նույն օրն <u>էլեկտրոնային եղանակով ծանուցում է</u> առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:**

Ընկերությանն ուղարկված ծանուցումը՝ շտկում կատարելու վերաբերյալ պահանջով ուղարկվել է armeps էլեկտրոնային համակարգից՝ Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի անունից, որը ստորագրվել է «Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ-ի տնօրենի կողմից, որտեղ հստակ նշվել է, որ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 6.1-ում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Ընկերության կողմից նշվել է, որ դեղատունը գտնվում է 25 կմ հեռավորության վրա, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին, և վերջինիս շտկումն իրականացնելու համար տրվել է մեկ աշխատանքային օր:

Նման պայմաններում, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps էլեկտրոնային

համակարգի միջոցով, ինչ վերաբերում է նշված ծանուցումը տնօրենի կողմից ստորագրված լինելու հանգամանքին, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ չի արգելվում նշված փաստաթղթի հաստատումը տնօրենի կողմից, ուստի Խորհուրդը գտնում է, որ նշված փաստը որևէ կերպ չէր կարող խոչընդոտ հանդիսանալ Ընկերության համար՝ սահմանված ժամկետում իրականացնելու արձանագրված անհամապատասխանության շտկում:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի թիվ 7-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցին մերժելուց հետո պետք է փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացներ նշված չափաբաժնով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին, սակայն թիվ 7-րդ չափաբաժնի մասով փաստաթղթեր տրամադրելու առաջարկ է ներկայացվել 3-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին, այն հիմնավորմամբ, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն թիվ 3-րդ չափաբաժնի ամբողջական նկարագիրը ներկայացնելիս հայտարարել էր, որ չունի պոլիկլինիկայի սպասարկման տարածքում գործող կրպակ, ապա Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության դիտարկումը սույն մասով հիմնավոր է, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի թիվ 7-րդ չափաբաժնի մասով մերժելով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր տրամադրելու պահանջ ներկայացնելով 3-րդ տեղ զբաղեցրած մասնակցին գործել է Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջի խախտմամբ, քանի որ վերը նշված հոդվածի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված հետևյալ դիտարկումներին, այն է՝

• Պատվիրատուի կողմից թյուրիմացաբար մեկ ընթացակարգի մեջ միավորվել են միանգամայն երկու տարբեր տեսակի մրցույթներ՝ դեղորայքի ձեռքբերում և քաղաքացիներին՝ անվճար դեղորայքի ապահովման պարտադիր ցանկով դեղատնային ծառայությունների ձեռք բերում,

• ՀՀ առողջապահության նախարարի 27.01.2005թ. թիվ 74-Ն հրամանի վկայակոչված 4.1, 4.7, 4.8 կետերում բացակայում է որևէ պահանջ 2 կմ հեռավորության վերաբերյալ, ուստի ք.Գյումրի, Հաղթանակի 25 հասցեից 2 կմ-ից ոչ հեռու պահանջը հանդիսանում է խտրական և չհիմնավորված պահանջ, որը հակասում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-ր մասի պահանջներին, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ըստ էության վիճարկվում են հրավերի պահանջները:

Այս տեսանկյունից Խորհուրդն անհրաժեշտ է գտնում նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ ***եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը***, նախաորակավորման հայտարարության կամ ***հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը,*** մինչդեռ «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստն արդեն իսկ տեղի է ունեցել, ուստի Ընկերության կողմից այլևս չեն կարող վիճարկվել Ընթացակարգի հրավերի պահանջները:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն «ԲՊ-ԳՀԱՊՁԲ-18» ծածկագրով ընթացակարգի շրջանակում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, որի հետևանքով Ընկերության հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին թիվ 3-րդ չափաբաժնի մասով դադարեցվել է:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2018թ. թիվ 03/26-3/249-18 գրությամբ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00650302) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ